

## Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

### Հայաստանի Հանրապետության Կառավարության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության Կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով երկու երկրների ժողովուրդների միջև գոյություն ունեցող հարաբերությունների հետագա զարգացման և ամրապնդման անհրաժեշտությունը,

ձգտելով զարգացնել և խորացնել համագործակցությունը կրթության և գիտության բնագավառում,

համաձայնեցին հետևյալի մասին.

#### Հոդված 1

Կողմերի միջև սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացվող կրթության և գիտության բնագավառում համագործակցության գործողությունները պետք է համապատասխանեն իրենց միջազգային պարտավորություններին և երկու երկրներում գործող օրենսդրությանը, ինչպես նաև Կողմերի մարդկային ռեսուրսներին և ֆինանսական կարողություններին:

#### Հոդված 2

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից սույն Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու նշանակված մարմինը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է, իսկ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության Կառավարության կողմից՝ Կրթության և վերապատրաստման նախարարությունը:

### **Հոդված 3**

Կողմերը իրենց իրավասության շրջանակներում կաջակցեն կրթական հաստատություններին, ինչպես նաև բարձրագույն ուսումնական և հետազոտական հաստատություններին՝ ուղղակի համագործակցային հարաբերությունները խթանելու և զարգացնելու նպատակով:

### **Հոդված 4**

1. Կողմերը կխրախուսեն և կաջակցեն իրենց պետությունների հետազոտողների, դասախոսների, դասավանդող անձնակազմի, ուսանողների և աշակերտների միջև իրականացվող փոխանակման ծրագրերին:

2. Փոխանակման ծրագրերի հստակ ժամկետները և պայմանները կկարգավորվեն Կողմերի շահագրգիռ հաստատությունների և կազմակերպությունների միջև՝ համապատասխան համաձայնագրերով:

### **Հոդված 5**

1. Կողմերը կխրախուսեն համատեղ հետազոտական նախագծերի մշակումն ու իրականացումը՝ գիտական համագործակցությունը զարգացնելու և ընդլայնելու նպատակով, ինչպես նաև կփոխանակեն գիտության ու հետազոտական և փորձագիտական զարգացման ոլորտներում տեղեկատվություն:

2. Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության հստակ ժամկետները և ֆինանսական պայմանները կկարգավորվեն Կողմերի շահագրգիռ հաստատությունների և կազմակերպությունների միջև՝ համապատասխան համաձայնագրերով:

### **Հոդված 6**

Կողմերը, իրենց ֆինանսական հնարավորությունների սահմաններում և ազգային օրենսդրության համաձայն, կտրամադրեն կրթաթոշակներ մյուս Կողմի ուսումնական և հետազոտական հաստատությունների աշակերտներին, ուսանողներին, դասավանդող անձնակազմին, դասախոսներին և հետազոտողներին: Այդ նպատակով, տարվա կտրվածքով, յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին կառաջարկի կրթաթոշակային 5 տեղ ուսանողների,

դասավանդող անձնակազմի, դասախոսների և հետազոտողների համար՝ իր պետությունում բակալավրի, մագիստրոսի, դոկտորանտուրայի և ինտերնատուրայի ծրագրերով ուսում ստանալու նպատակով: Ուղարկող Կողմը կամ մասնակիցը կվճարի հետադարձ ավիատոմսի արժեքը, իսկ ընդունող Կողմը մասնակիցներին կառաջարկի ուսման վարձավճարից ազատում, ամսական կրթաթոշակ և բժշկական ապահովագրություն յուրաքանչյուր Կողմի Կառավարության կողմից տրվող կրթաթոշակի գումարի սահմաններում (ներառյալ, անհրաժեշտության դեպքում, մեկ տարվա տևողությամբ լեզվի վերապատրաստում):

### **Հոդված 7**

Կողմերը կհամագործակցեն միմյանց հետ կրթությանը ու գիտությանն առնչվող հարցերում այն միջազգային կազմակերպություններում, որոնց անդամ են հանդիսանում իրենք:

### **Հոդված 8**

Կողմերը իրենց ֆինանսական հնարավորությունների սահմաններում միմյանց կխրախուսեն և կաջակցեն բարձրագույն ուսումնական և հետազոտական, կրթական հաստատություններում իրենց պաշտոնական լեզվի, գրականության, պատմության և մշակույթի ուսումնասիրմանը և դասավանդմանը, ինչպես նաև կաջակցեն աշակերտների, ուսանողների, դասավանդող անձնակազմի, դասախոսների և հետազոտողների, ինչպես նաև մեթոդաբանական ձեռնարկների և դասագրքերի փոխանակմանը:

### **Հոդված 9**

Կողմերը իրենց ֆինանսական հնարավորությունների սահմաններում կիրականացնեն կրթության և գիտության ոլորտի փորձագետների պատվիրակությունների փոխանակում՝ երկկողմ հարաբերությունների ամրապնդման նպատակով, և կիրականացնեն ընթացիկ նախագծերի և բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվության և աշխատանքային փորձի փոխանակում:

### **Հոդված 10**

1. Կողմերը կիրականացնեն համապատասխան տեղեկատվության փոխանակում՝ իրենց հաստատությունների կողմից տրվող որակավորումների համարժեքությունը սահմանելու նպատակով, ինչպես նաև կաջակցեն դրանց փոխադարձաբար ճանաչմանը:

2. Կողմերը կխրախուսեն խորհրդակցություններն ու ուղիղ համագործակցությունը Կողմերի հաստատությունների կողմից տրված որակավորումների ճանաչման գործընթացում ներգրավված իրավասու հաստատությունների միջև՝ առանձին որակավորումների փոխադարձաբար ճանաչման համաձայնագրեր ստորագրելու նպատակով:

### **Հոդված 11**

Սույն Համաձայնագրի կիրառումը չի խոչընդոտի Կողմերի մասնակցությամբ այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքներին և պարտականություններին, ինչպես նաև այն միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությանը, որոնց անդամ են հանդիսանում Կողմերը:

### **Հոդված 12**

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդպիսի փոփոխությունները կձևակերպվեն սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող առանձին արձանագրությամբ և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածի համաձայն:

### **Հոդված 13**

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած վեճ կլուծվի Կողմերի միջև՝ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

### **Հոդված 14**

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

2. Սույն Համաձայնագիրը կգործի հինգ տարի ժամկետով, և սույն Համաձայնագրի գործողության ժամկետը ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակահատվածներով, եթե Կողմերից որևէ մեկը Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին չձանուցի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

3. Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդի սույն Համաձայնագրի շրջանակներում նախաձեռնված և Համաձայնագրի դադարեցման պահին դեռևս չավարտված ցանկացած գործողության վրա:

Կատարված է Հանույ քաղաքում 2019 թվականի հուլիսի 5-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, վիետնամերեն և անգլերեն: Բոլոր տեքստերը հավասարազոր են: Յուրաքանչյուր կողմին կտրվի մեկ օրինակ:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության  
Կառավարության կողմից՝



Վիետնամի Սոցիալիստական  
Հանրապետություն  
Կառավարության կողմից՝

